

# Մեծ Եղեռնի 90-ամյակին նվիրված ոգեկոչման միջոցառումներ Հոլանդիայում

90 տարի է անցել այն սև օրերից, երբ մի ողջ ժողովուրդ դաժանորեն բնաջնջվեց իր բնօրրանում: Ոչ թե այս կամ այն անհատը, ոչ թե մի թաղամաս կամ գյուղ, այլ ամբողջ արևմտահայությունը տեղահան արվեց և գազանաբարո ոչնչացվեց երիտթուրքերի իշխանության կողմից նախօրոք կազմված ծրագրի համաձայն: Իսկ «քաղաքակիրթ» պետությունները տեսան ու լռեցին՝ ազատ թողնելով երիտթուրք մարդասպաններին իրենց եղեռնագործության մեջ: Ցավոք հենց նույն պետությունների և քաղաքական գործիչների լռությունը, որ սկսվեց Լոզանում և շարունակվեց մինչև Բրյուսել, 1915-ից մինչև 2005-ը, հնարավորություն տվեց իրար հաջորդող թուրք իշխանություններին ուրանալ այս ոճրագործությունը: Մենք գոհ ենք, որ 2004 թ. դեկտեմբերի 21-ին, Հոլանդիայի գերագույն քաղաքական մարմինը՝ խորհրդարանը, հետևելով այլ երկրների օրինակին, պաշտոնապես ճանաչեց հայոց ցեղասպանությունը:

Հայ ժողովուրդը զոհվեց, սակայն չընկճվեց: Թուրք յաթաղանից մազապուրծ մի բուռ հայեր, գրկված իրենց տնից, իրենց հայրենի հողից ստիպված սփռվեցին ամբողջ աշխարհով մեկ: «Չկա հայկական հարց, քանի որ չկան հայեր» գոռոզ գոչեցին երիտթուրք ոճրագործները: Սակայն հայ ժողովուրդը վերագտավ իր ուղին: Նա կարողացավ թե՛ փոքր ու տկար Հայաստանում և թե՛ ի սփյուռս աշխարհի ձեռք բերել նորանոր նվաճումներ, մեկ անգամ ևս ապացուցելով իր ապրելու հզոր կամքը:

Այսօր ավելի քան երբեք, 90 տարի Մեծ Եղեռնից հետո, հայ ժողովուրդը պետք է վճռական և համախմբված պայքար մղի իր արդարացի իրավունքների իրականացման համար: Միայն մեր միասնական և համատեղ ու ժերով է հնարավոր իրագործել մեր նպատակները:

Հոլանդահայ կազմակերպությունների միության «Ապրիլ 24 հանձնախումբը» խոր գիտակցելով հայոց ցեղասպանության 90-ամյակի ոգեկոչման կարևորությունը, կոչ է անում հոլանդահայությանը և բոլոր նրանց ում համար թանկ է մարդկային արժանապատվությունը, միասնական ճակատով ոգեկոչել հայոց բյուրավոր նահատակների անմահ հիշատակը:

Այդ նպատակով «Ապրիլ 24 հանձնախումբը» կազմակերպում է հետևյալ երեք միջոցառումը, մեր հարգանքի տուրքը մատուցելու մեր ժողովրդի 1,5 միլիոն զոհերին և վերանորոգելու մեր պարտքը մեր պայքարը շարունակել մինչև հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը և մեր արդարացի պահանջների իրականացումը:

Ձեր ֆինանսական օգնությունը այս միջոցառման համար կաող եր փոխանցել հետևյալ բանկային հաշվին՝ ABN AMRO հաշիվ՝ 567079678 - ACVA inzake 24 april – Rijswijk ZH